18.12.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
դեկտեմբերի 17-ի N 2062 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ ՎԱՐՈՂ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է անշարժ գույքի կադաստր վարող մարմնին Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ընթացիկ հաշվառման մասին տեղեկություններ ներկայացնելու կարգը:

2. Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինները մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը անշարժ գույքի կադաստր վարող մարմնին են ներկայացնում նախորդ ամսվա ընթացքում նոր առաջացած և (կամ) փոփոխություններ կրած հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ընթացիկ հաշվառման մասին անհրաժեշտ տեղեկությունները:

3. Սույն կարգի 2-րդ կետի կիրառության իմաստով՝ նոր առաջացած և (կամ) փոփոխություններ կրած է համարվում կադաստրային գնահատման հարկային տարվա հուլիսի 1-ի դրությամբ անշարժ գույքի կադաստր վարող մարմնում գրանցված (հաշվառված) տեղեկությունների համեմատությամբ մինչև հաջորդ կադաստրային գնահատման տարվա ավարտը նոր կառուցված կամ նպատակային կամ գործառնական նշանակության, ավարտվածության աստիճանի, հարկայնության փոփոխություններ կրած, քանդված (ոչնչացված) հարկման օբյեկտ համարվող (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետում նշված) անշարժ գույքը:

4. Սույն կարգի 2-րդ կետում նշված անշարժ գույքի ընթացիկ հաշվառման մասին տեղեկությունները ներկայացվում են համաձայն սույն կարգի հավելվածի՝ ըստ N 1 ձևի տեղեկությունների լրացման կարգի:

5. Նոր առաջացած (նոր կառուցված, այդ թվում՝ վերակառուցված, վերականգնված, արդիականացված, ուժեղացված, ընդլայնված) և հարկայնության փոփոխություններ

ունեցող անշարժ գույքի դեպքում սույն կարգի 4-րդ կետով սահմանված տեղեկություն-ների հետ միասին ներկայացվում են նաև Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության որակավորում ունեցող անձի կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված շենքերի, շինությունների հատակագծերը ու շինության բնութագիրը:

6. Նոր առաջացած (նոր կառուցված, այդ թվում՝ վերակառուցված, վերականգնված, արդիականացված, ուժեղացված, ընդլայնված) անշարժ գույքի կադաստրային գնահատում կատարելու նպատակով տեղեկությունները կարող են ներկայացվել նաև համաձայնեցված նախագծի և ավարտական ակտի պատճենների տեսքով:

7. Նպատակային կամ գործառնական նշանակության փոփոխություններ ունեցող անշարժ գույքի դեպքում սույն կարգի 4-րդ կետով սահմանված տեղեկությունների հետ միասին ներկայացվում են նաև այդ փոփոխությունների համար հիմք հանդիսացած իրավահաստատող փաստաթղթերը:

8. Անշարժ գույքի կադաստր վարող մարմինը սույն կարգով ստացված տեղեկությունների հիման վրա իրականացնում է անշարժ գույքի կադաստրային գնահատում, որոնց մասին տեղեկությունները սահմանված կարգով ներկայացվում են անշարժ գույքի հարկ վճարողներին հաշվառող մարմնին:

9. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սույն կարգով սահմանված տեղեկությունները անշարժ գույքի կադաստր վարող մարմնին ներկայացվում են թղթային և էլեկտրոնային տեսքով, իսկ փոխգործելիության հարթակի գործարկումից հետո տեղեկությունները ներկայացվում են առցանց եղանակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Ձև N 1

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

_____ թվականի _____ամսվա ընթացքում ՀՀ _____մարզի _____համայնքի _____բնակավայրում (վարչական շրջանում) կադաստրային գնահատման (վերագնահատման) տարվա հուլիսի 1-ի դրությամբ գրանցված (հաշվառված) տվյալների համեմատությամբ, անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ընթացիկ հաշվառման մասին

h/h	Սեփականատիրոջ (համասեփականատիրոջ)			Անշարժ գույքի գտնվելու վայրի հասցեն	Կադաստրային ծածկագիրը	Շինության նպատակային նշանակությունը	Շինության գործառնական նշանակությունը	Շինության քանդման (ոչնչացման) ամսաթիվը	Լրացուցիչ նշումներ
	Անունը, ազգանունը և հայրանունը կամ կազմակերպության անվանումը	Ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը (կամ հանրային ծառայության համարանիշը) կամ կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման համարը (կամ ՀՎՀՀ-ն)	Ֆիզիկական անձի հաշվառման (գրանցման) կամ կազմակերպության գտնվելու վայրի հասցեն						
1	2	3	4	5	6	7	8	9	10

Հայաստանի Հանրապետության __մարզի
_____համայնքի ղեկավար _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

«_____» «_____» 20 _____թ. Կ. Տ.

N 1 ՁԵՎԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Տեղեկությունների 1-ին սյունակում լրացվում ներկայացվող տեղեկության հերթական համարը:

2. Տեղեկությունների 2-րդ սյունակում լրացվում են անշարժ գույքի սեփականատիրոջ (համասեփականատիրոջ) ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հայրանունը կամ կազմակերպության անվանումը:

3. Տեղեկությունների 3-րդ սյունակում լրացվում են անշարժ գույքի սեփականատիրոջ (համասեփականատիրոջ) ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը (կամ հանրային ծառայության համարանիշը) կամ կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման համարը (կամ ՀՎՀՀ-ն):

4. Տեղեկությունների 4-րդ սյունակում լրացվում է սեփականատիրոջ (համասեփականատիրոջ) ֆիզիկական անձի հաշվառման (գրանցման) կամ կազմակերպության գտնվելու վայրի հասցեն:

5. Տեղեկությունների 5-րդ սյունակում լրացվում է անշարժ գույքի գտնվելու վայրի հասցեն՝ մարզ, համայնք, բնակավայր (վարչական շրջան), փողոց, շենք և շինություն:

6. Տեղեկությունների 6-րդ սյունակում լրացվում է անշարժ գույքի կադաստրային ծածկագիրը:

7. Տեղեկությունների 7-րդ սյունակում լրացվում է շինության նպատակային նշանակությունը:

8. Տեղեկությունների 8-րդ սյունակում լրացվում է շինության գործառնական նշանակությունը:

9. Տեղեկությունների 9-րդ սյունակում լրացվում է շինության քանդման (ոչնչացման) ամսաթիվը: Եթե շինությունը քանդված (ոչնչացված) չէ, ապա տեղեկությունների 9-րդ սյունակը չի լրացվում:

10. Տեղեկությունների 10-րդ սյունակում նոր կառուցված կամ նոր առաջացած շինութունների դեպքում լրացվում է «նոր կառուցված», շինության նպատակային, գործառնական նշանակությունների, ավարտվածության աստիճանի, հարկայնության փոփոխությունների դեպքում՝ համապատասխանաբար «նպատակային նշանակության փոփոխություն», «գործառնական նշանակության փոփոխություն», «ավարտվածության աստիճանի փոփոխություն», «հարկայնության փոփոխություն», իսկ քանդված (ոչնչացված) շինության դեպքում՝ «քանդված (ոչնչացված)»: